

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**ՄԱՐՍԵԼ ԶԱՐԱՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՋ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*Ռոբեր Տեր-Սերկերյան
Ֆրանսիա*

Նկատի ունենալով ներկա գիտաժողովի առանցքային թեման՝ հայոց լեզվաբանության զարգացման հեռանկարները, և այն, որ առանց կենդանի կիրարկվող լեզվի լեզվաբանությունը կաղ է, նպատահարմար գտանք կատարել հանրալեզվաբանական ուսումնասիրություն՝ նվիրված Մարսել քաղաքի և նրա շրջակայքի հայ համայնքի մեջ հայոց լեզվի կիրառության ընդհանուր պայմաններին, իմա՝ հայերեն հաղորդակցվողների իմացության մակարդակը, գործառության ոլորտները, հաճախականությունը:

Այսպիսի ուսումնասիրությունը հենց Մարսել քաղաքի հայ համայնքի մեջ կատարելը նշանակալից է մի շարք պատճառներով:

Նախ պետք է ասել, որ այսօր Մարսելը ոչ միայն Ֆրանսիայի, այլև ամբողջ Եվրոպայի մեջ ամենահոծ ու ամենախիտ հայ բնակչություն ունեցող քաղաքն է: Մարսել քաղաքի հայ համայնքը կազմավորվել է 1920-ական թվականներից:

Այդ քաղաքի նավահանգիստն են իջել ու ապաստան գտել եղեռնից մազապուրծ հազարավոր հայեր՝ սկսած 1920-ական թվականներից: Այսօր Մարսել քաղաքի բնակչության 8-9 տոկոսը հայեր են, այսինքն՝ մոտավոր հաշվումներով 60-70 հազար հայեր ապրում են այնտեղ:

Քաղաքում գործում են երեսուցից ավելի հասարակական, կրոնական, մշակութային, հայրենակցական, բարեգործական, քաղական, մարզական միություններ ու կազմակերպություններ: Միայն Մարսել քաղաքում այսօր գործում են ութ հայ առաքելական, երեք հայ ավետարանական և մեկ կաթողիկե եկեղեցի:

Այս բոլորից ելնելով՝ կարելի է հետևություն անել, որ այդ քաղաքում գոյություն ունի չափազանց բուռն, գործունյա հայ ազգային կյանք: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ այդ համայնքի մեջ հայոց լեզվի կիրառությունը, լեզվական դրությունը ներկայացուցչական բնույթ ունեն ամբողջ Արևմտյան Եվրոպայի հայ համայնքների համար:

Լեզվի զարգացման հեռանկարները, նրա հարատևությունն ապահովող նախադրյալներից ամենակարևոր գործոններն են.

- տվյալ լեզվով հաղորդակցվողների քանակը,
- հաղորդակցվողների լեզվական իմացության մակարդակը,
- լեզվի կիրառության ոլորտները,
- տվյալ լեզվի կարգավիճակը, տեղը հասարակության մեջ:

Այս գործոններն ուսումնասիրելու նպատակով մարսելահայ համայնքի մեջ, ինչպես նաև նրա շրջակայքում, կատարել ենք լեզվական քննախուզություն՝ անկետա. բնակչության մեջ բաժանել ենք անանուն հարցաթերթիկներ, որոնց մեջ առա-

ջարկել ենք պատասխանել հետևյալ հարցերին. անձի ծննդյան թվականն ու վայրը, դպրոց հաճախել է, թե՞ ոչ, (եթե հաճախել է, ապա քանի տարի). նրա հայերեն իմացության մակարդակը, հայերեն խոսում է, թե՞ ոչ, եթե խոսում է, ապա ինչ հաճախականությամբ, ո՞ւմ հետ և որտե՞ղ է խոսում, և վերջապես անձը հայերեն գրել - կարդալ գիտի՞:

Ստացել ենք 630 պատասխան հարցաթերթիկներ, որոնց վրա հիմնված է մեր ուսումնասիրությունը:

Այս տիպի քննախուզության մեջ ամենակարևոր խնդիրներից մեկը հարցաթերթիկների ներկայացուցչական բնույթն ապահովելն է, այսինքն՝ անել այնպես, որ համայնքի տարբեր խավերին պատկանող անձերը մասնակցեն անկետային:

Այս առիթով պետք է ասել, որ Սփյուռքում հայ համայնքի անդամներին կարելի է բաժանել մի քանի խավերի, խմբավորումների կամ դասերի:

Խոսքը մարդկանց ըստ սոցիալական դիրքի կամ ըստ հայոց լեզվի իմացության կամ կիրառության մակարդակի դասակարգման մասին չէ: Այս դասակարգումը առաջարկում են համաձայն մարդկանց ազգային արմատների, ազգային ինքնության հետ ունեցած կապերի ու հարաբերությունների: Պատկանելով այդ նույն հայ համայնքին՝ երկար տարիներ ուսումնասիրել են ազգային կյանքի գործընթացը և, հիմնվելով այդ փորձի վրա՝ հայ համայնքի անդամներին առաջարկում են բաժանել 4 հիմնական խավերի կամ դասերի.

- Առաջին խավը կանվանենք **գերակտիվ դաս**, որը կազմում է հայ բնակչության մոտավորապես 0,5 տոկոսը, այսինքն՝ մոտ 250-300 անձեր, որոնք հանդիսանում են հայ ազգային կազմակերպությունների՝ մշակութային, եկեղեցական, կուսակցական և այլ միությունների ղեկավար դասը: Նրանք ազգային կազմակերպությունների վարչական խորհուրդների, մարմինների անդամներ են, որոնք կազմակերպում են, շունչ են տալիս ազգային կյանքին: Այս դասը ունի հայ համայնքը ներկայացնելու դերը տեղական ֆրանսիական իշխանությունների մոտ: Այս խմբի մեջ կարելի է հանդիպել տարբեր սերունդներին պատկանող մարդկանց, բոլորն էլ, անշուշտ, հայրենամուկներ, ազգասեր գործունեություն են ծավալում, չնայած պետք է ասել, որ այս բոլոր առաքինություններով հանդերձ, նրանցից շատերը այդ գործունեությունը դարձրել են անձնական կարիերայի ասպարեզ, նրանց համար այդ պաշտոնները ընկերային, սոցիալական աստիճան՝ դիրք են ապահովում: Նրանց հայերենի իմացության մակարդակը բավական ցածր է, վարչական բոլոր ժողովները տեղի են ունենում ֆրանսերենով:

- Երկրորդ խավը՝ **ակտիվ դասն է**: Սա հայ բնակչության այն խավն է, որը ոչ միայն ակտիվորեն մասնակցում է բոլոր ազգային միջոցառումներին, այլև հետաքրքրվում է ազգային-համայնական կյանքով, ապրում է հայ ազգային ավանդույթներով: Նա մասամբ տեղյակ է Հայաստանում տեղի ունեցող կարևոր իրողություններին, ինչպես նաև աշխարհում հայերին վերաբերող քաղաքական, մշակութային մարզական իրադարձություններին: Այս խավը իր մեջ կրում է և ապրեցնում ազգային բոլոր արժեքները: Այն հայ համայնքի ողնաշարն է, որը սերտորեն կապված է իր ազգային արմատների հետ: Այս դասը կազմում է բնակչության մոտ 15 տոկոսը, մոտավորապես 7-8 հազար մարդ:

- Երրորդ խավը կանվանենք **կրավորական դաս**: Սա բնակչության այն մասն է, որը ժամանակ առ ժամանակ, տարին 1 կամ 2 անգամ, մասնակցում է ազգային կյանքում չափազանց կարևոր իրադարձություններին: Այս խավը հեռվից հեռու է հետևում կամ հետաքրքրվում ազգային կյանքում տեղի ունեցող երևույթներին, չունի ազգային խոր գիտակցություն և մա-

նավանդ չի ապահովում ազգային արժեքների փոխանցումը երիտասարդ սերունդներին: Կապը ազգային արժատների հետ շատ թույլ է, գրեթե աննկատ, այն որևէ դեր չի խաղում նրանց ամենօրյա կյանքում: Մեր հաշվումներով այս խավը կազմում է բնակչության 30 տոկոսը, մոտավորապես 18 հազար մարդ:

- Չորրորդ խավը **անտարբեր դասն է**, որը ոչ միայն չի հետաքրքրվում ազգային, հայրենական համայնքային կյանքով, այլև այլևս չի գիտակցում, կորցրել է հայ ազգային արժեքների գիտակցությունը: Բնակչության այս խավը կարելի է համարել բոլորովին ծուլված ֆրանսիական հասարակությանն ու միջավայրին, նրանց ամենօրյա կյանքում ոչինչ չի հիշեցնում, որ նրանց նախնիները հայ են եղել: Այս խավը կազմում է բնակչության 55 տոկոսը, այսինքն՝ մոտավորապես 30-35 հազար հոգի:

Այս դասակարգումը իմ անձնական ուսումնասիրությունների, դիտողությունների արդյունքն է, այն չունի խիստ գիտական ճշգրիտ բնույթ, բայց հեռու չէ իրականությունից:

Մեր խնդիրն էր հարցաթերթիկները բաժանել այս չորս խավերի մեջ այնպես, որ բոլորն էլ ունենան հավասար ներկայացուցչական մաս ըստ համայնքի մեջ ունեցած իրենց տոկոսային հարաբերության:

Մեր ստացած պատասխանները (որոնք կազմում են բնակչության 9-10 տոկոսը) բաժանել ենք ըստ սերունդների.

1. 1920-ական թվականներից առաջ և այդ տարիների ընթացքում ծնված անձինք, այսինքն՝ այսօր 75-ից բարձր տարիքի մարդիկ:
2. 1930-ական թվականներից մինչև 1945 թվականը (պատերազմի վերջը) ծնված անձեր, այսինքն՝ 58-ից 75 տարեկան մարդիկ:
3. երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945-ից մինչև 1965թ. ծնված անձեր, այսինքն՝ 38-58 տարեկան մարդիկ:
4. և վերջապես, 1965-1985 թվականներին ծնված անձինք, այսինքն՝ 18-38 տարեկան մարդիկ:

Նախ կներկայացնեմ ամեն մեկ սերնդի համար առանձին-առանձին համաժամանակյա վերլուծություն, որից հետո կկատարեմ բոլոր սերունդների միջև տարժամանակյա քննություն:

Առաջին սերունդ. 75-ից բարձր տարիքով մարդիկ (54 հարցաթերթիկ): Տե՛ս սխեմա թիվ 1:

Նրանցից 89%-ը խոսում է հայերեն լավ, չնայած նրանց միայն 65%-ն է դպրոց հաճախել:

Նրանցից 35%-ը դպրոց չի հաճախել, բայց որոնց 74%-ը խոսում է հայերեն: Նրանց համար լեզուն փոխանցվել է ընտանեկան միջավայրում:

Պետք է ասել, որ այս սերնդի մարդկանց 72%-ը Ֆրանսիայում չի ծնվել, միայն 28%-ն է ծնվել Ֆրանսիայում:

Բացի այդ, հայերեն լավ խոսողների 72%-ն է գործածում հայերենը հաճախ, մյուսները չեն գործածում հայերենը, որովհետև, ինչպես հիշեցնում են հարցաթերթիկի մեջ, խոսելու առիթ կամ տեղ չունեն:

Եվ վերջապես, հայերեն խոսողների միայն 50%-ը գրել գիտի և 69%-ը կարդում է հայերեն:

Երկրորդ սերունդ. 1930-1945 թվականներին ծնված անձեր, որոնք այսօր 58-75 տարեկան են:

Այս սերնդի 73%-ն է խոսում հայերեն: Տե՛ս սխեմա թիվ 2:

Նրանցից միայն 57%-ն է հաճախել հայկական դպրոց, որոնցից 85%-ը խոսում է հայերեն: Դպրոց հաճախողների 15%-ը հայերեն խոսել չգիտի:

Այս սերնդի ներկայացուցիչների 43%-ը դպրոց չի հաճախել, որոնցից 57%-ը խոսում է հայերեն:

Այս տարիքի անձանց 83,5%-ը ծնվել է Ֆրանսիայում: Նրանցից 46%-ը հայերեն գրել գիտի և 47%-ը կարդում է հայերեն:

Այս սերնդի անձերի միայն 57%-ն է կիրառում հայերենը:

Երրորդ սերունդ. 1945-1965թթ. ծնված, անձեր, 38-58 տարեկան մարդիկ:

Այս սերնդի 56%-ն է խոսում հայերեն: Տե՛ս սխեմա թիվ 3:

Այս սերնդի անձանց միայն 56%-ն է հաճախել դպրոց, որոնցից միայն 75%-ն է խոսում հայերեն:

Դպրոց հաճախողների 25%-ը հայերեն չգիտի:

Դպրոց չհաճախողների (44%) 68%-ը հայերեն չգիտի, իսկ 32%-ը խոսել գիտի: Այս տարիքի ներկայացուցիչների 69%-ը ծնվել է Ֆրանսիայում: 21%-ը ծնվել է ոչ Ֆրանսիայում և նշանակալից է, որ նրանցից 10%-ը ծնվել է Հայաստանում:

Այս տարիքի անձանց 40%-ը հայերեն գրել գիտի և 44%-ը կարդում է հայերեն:

Միայն 52%-ն է գործածում հայերենը ամեն օր կամ շաբաթը 1-2 անգամ:

Չորրորդ սերունդ. 1965-1985թթ. ծնված անձեր, որոնց տարիքն է 18-ից 38 տարեկան:

Այս սերնդի 55%-ն է խոսում հայերեն: Տե՛ս սխեմա թիվ 4:

Այս տարիքի անձանց 73%-ը հաճախել է դպրոց, որոնց 62%-ը խոսում է հայերեն, բայց 38%-ը չի խոսում հայերեն:

Դպրոց չհաճախողների (27%) 38%-ը խոսում է հայերեն, առանց դպրոց հաճախելու վարժվել են հայերեն խոսելուն ընտանիքի մեջ:

Այս տարիքի անձանց 69%-ը ծնվել է Ֆրանսիայում, 9%-ը Հայաստանում և 22%-ը այլ երկրներում:

Այս սերնդի անձանց 40%-ը գրում է հայերեն և 44%-ը կարդում է հայերեն: Եվ վերջապես, հայերենը հաճախ են գործածում խոսողների միայն 52%-ը:

Այժմ անցնենք տարբեր սերունդների միջև լեզվի, իմացության և կիրառության տարժամանակյա քննությանը ըստ տարբեր չափանիշների: Տե՛ս սխեմա թիվ 5:

Առաջին չափանիշը հայերեն խոսելու կամ չխոսելու չափանիշն է:

Եթե առաջին սերնդի (75-ից բարձր) մարդկանց 89%-ը խոսում է հայերեն լավ, ապա երկրորդ սերնդի (58-75 տարեկան) մարդկանց միայն 73%-ն է լավ խոսում, իսկ երրորդ սերնդի (38-58 տարեկան) միայն 56%-ն է խոսում լավ: Չորրորդ սերնդի ներկայացուցիչների միայն 55%-ն է լավ խոսում հայերեն:

Ինչպես տեսնում ենք, մեկ սերնդից մյուսը, աստիճանաբար, հայերեն լավ խոսողների քանակը տոկոսային հարաբերությամբ զգալիորեն պակասում է, չնայած մեկ սերնդից մյուսը բնակչության թիվն ավելանում է:

Նույն երևույթն է պարզվում, երբ համեմատում ենք համաձայն մյուս չափանիշների՝ հայերեն գրել-կարդալ իմացողների և ընդհանրապես հայերենը գործածողների տոկոսային հարաբերության մեջ՝ որքան մոտենում ենք ներկա չորրորդ սերնդին, այնքան աստիճանաբար հայերենը գործածողների թիվը պակասում է:

Այս երևույթը պարզ երևում է սխեմայի վրա: Տե՛ս սխեմա թիվ 6:

Բացի այդ, պետք է նշել, որ հարցերի մեջ նշված են, թե քանի՞ տարի են դպրոց հաճախել (դպրոց հաճախելու տևողությունը) և որտե՞ղ, ի՞նչ հանգամանքներում են մարդիկ հայերեն խոսում: Պարզվում է, որ դպրոց հաճախողների մեծամասնությունը (90%-ը) հաճախել է շաբաթօրյա դպրոց, այն էլ միայն 1-2 տարի տևողությամբ, ոչ ավելի, և այն էլ 8-10 տարեկան հասակում: Հետևաբար, կարելի է հետևություն անել, որ հայերեն խոսողների ճնշող մեծամասնությունը խոսել է սովորել տան պայմաններում: Լեզվի բանավոր ուսուցումը ընտանեկան շրջապատում, չի փոխանցում գրել-կարդալու կարողությունը: Սրանով է բացատրվում նաև այն փաս-

տը, որ խոսել իմացողների 75%-ը ոչ կարողալ գիտի, ոչ գրել:

Ինչ վերաբերում է «ու՞մ հետ և որտե՞ղ եք խոսում» հարցին, ապա 80%-ը պատասխանում է՝ ընտանիքի անդամների հետ կամ ընկերական շրջապատում:

Մեզ արդեն հայտնի է, որ Սփյուռքի պայմաններում հայերենի կիրառության ուղիղները, լեզվական տարածքները չափազանց նեղ են ու սահմանափակ, լեզուն գործում է սահմանափակ միկրոհամակարգի մեջ (1):

Այս բոլոր տվյալները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

Մեզ հետաքրքրող ամենաեական չափանիշը սերնդից սերունդ լեզվի փոխանցման չափն ու որակն է, ինչպես նաև լեզվի իմացության մակարդակը:

Լեզվի փոխանցումը սերնդից սերունդ իրականանում է կամ դպրոցում կամ էլ համայնքային-ընտանեկան միջավայրում:

Մեր տվյալները ցույց են տալիս, որ հաղորդակցվողների զգալի մասը լեզուն սովորել են ընտանեկան միջավայրում:

Լեզվի փոխանցումը մեկ սերնդից մյուսը կապված է դպրոցական համակարգի հետ:

Պարզվում է, որ առաջին սերնդի միայն 65%-ն է հաճախել դպրոց, որոնցից 76%-ը ծնվել է ոչ Ֆրանսիայում: Ֆրանսիայում ծնված անձանց միայն 24%-ն է հաճախել դպրոց: Երկրորդ սերնդի միայն 57%-ն է հաճախել դպրոց, որոնց 79%-ը ծնվել է Ֆրանսիայում: Երրորդ սերնդի համար դպրոց հաճախողների տոկոսային հարաբերությունը 56% է: Վերջապես, չորրորդ սերնդի 73%-ն է հաճախել դպրոց: Այս թիվը բավական բարձր է համեմատած նախորդ սերունդների հետ:

Պետք է ասել, որ Ֆրանսիայի հայ համայնքում դպրոցական համակարգի հարցը երբեք չի լուծվել, ավելի ճիշտ դպրոցական համակարգ գոյություն չի ունեցել և այսօր էլ չունի: Պարզապես հիշեցնենք, որ Փարիզում Մխիթարյանների Սամվել-Մուրատյան ամենօրյա դպրոցը գործել է 1928թ. մինչև 1974 թիվը: Աշակերտների միջին թիվը եղել է տարեկան 100 հոգի, և այսօր Ֆրանսահայ երկրորդ սերնդի հայերենը տիրապետող փոքրաթիվ մարդիկ եղել են այդ դպրոցի սաները:

Ինչպես արդեն նշվեց, ըստ մեր քաղած տվյալների, դպրոց գնացողների մեծամասնությունը (90%-ը) հաճախել է շաբաթօրյա դպրոց, այսինքն՝ շաբաթը մեկ անգամ 1 ժամ դաս, այն էլ առավելագույնը միայն 1-2 կամ 3 տարի: Դրանով է բացատրվում, որ այսպես ասած դպրոց հաճախողների 75%-ը հայերեն գրել-կարդալ չգիտի: Իսկ ընտանեկան շրջապատում հայերեն խոսել սովորողները ընդհանրապես գրել-կարդալ չգիտեն:

Պետք է ասել, որ վերջին 10-15 տարիների ընթացքում ամենօրյա դպրոցներ են բացվել, մեծ մասամբ՝ նախակրթարաններ: Մարսելում է գործում Ֆրանսիայում միակ ամենօրյա երկլեզու դպրոցը՝ Համազգայինը, 250 աշակերտներով, որոնք կարող են հաճախել մանկապարտեզից մինչև հասունության ատեստատ: Դա վերաբերում է դպրոցական հասակի աշակերտության միայն 0,5 տոկոսին:

Ինչպես ցույց է տալիս սխեման, եթե առաջին սերնդից երկրորդ սերունդ և երկրորդ սերնդից երրորդ սերունդ հայերեն լավ խոսողների թիվը պակասում է մոտավորապես 15%-ով, ապա երրորդ սերնդից չորրորդը այդ թիվը մնում է կայուն, երկու դեպքում էլ խոսողների թիվը հասնում է 56-55%-ի: Ինչպես տեսնում ենք, նահանջը ինչ-որ չափով կասեցվում է:

Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով:

Նախ՝ 80-90-ական թվականներին երևան եկած «դեպի ազգային ակունքները» շարժման շնորհիվ:

Այդ շարժման հիմքում ընկած են մի շարք կարևոր իրադարձություններ.

- Հայոց ցեղասպանությանը միջազգային ճանաչում տալու մոբիլիզացնող շարժումը,

- Ղարաբաղի ազատագրական շարժումը,
- Հայաստանի Հանրապետության անկախությունը,
- Հայոց լեզուն ֆրանսիական լիցեյներում որպես օտար լեզու ընտրելու հնարավորությունը տասնամյակի ավարտական քննություններում:

Այս բոլորը երիտասարդ սերնդի մեջ ստեղծեցին նոր մթնոլորտ, ազգային գիտակցության զարթոնք՝ լեզուն սովորելու, հայոց պատմությունը, մշակույթը ճանաչելու իրական պահանջ, նոր ձգտում՝ հայտնաբերելու իրենց պապերի պատմությունն ու ապրած կյանքը:

Սրանով է բացատրվում հայերեն խոսողների քանակի կայունությունը երրորդ և չորրորդ սերնդների միջև: (Սա ցույց է տալիս, որ լեզուն սովորելու, կիրառելու պահանջը, լեզվի իմացության մակարդակը կախված են զանգվածների, մասսաների սոցիալական տրամադրություններից):

Բացի այդ, պետք է հիշեցնել, որ Սփյուռքում ժամանակ առ ժամանակ, պարբերաբար, տեղի են ունենում բնակչության տեղաշարժեր, մեծ մասամբ կապված քաղաքական իրադարձությունների հետ, երկրի քաղաքական անկայունության հետ: Այս առումով, Մարսել քաղաքում զգալի եղավ ապաստանյալների նոր հոսքը՝ 1970-ական թվականներին Լիբանանից, 1980-ական թվականներին Ստամբուլից, 1990-ական թվականներին Հայաստանից: Մարսելի հայ համայնքը 2-3 տասնամյակների ընթացքում հարստացավ հայոց լեզուն տիրապետող բազմաթիվ ընտանիքներով, որն անվերապահորեն ազդեց մեր անկետայի հարցախույզի թվերի վրա:

Ինչ վերաբերում է հայերենը կիրառելու հաճախականությանը, ապա առաջին սերնդի 72%-ը դառնում է 52% չորրորդ սերնդի համար: Սա ուղղակիորեն կապված է հայերենի կիրառության միջավայրի նեղացման հետ: Հայտնի է, որ հայերենի կիրառության ուղիղները Սփյուռքում չափազանց սահմանափակ են, լեզուն գործում է միկրոհամակարգի մեջ, աստիճանաբար պակասում է հայախոս ընտանիքների քանակը:

Ինչպես ցույց են տալիս տոկոսային հարաբերությունները, մեկ սերնդից մյուսը լեզվի փոխանցումը տեղի ունենում է, իրականանում է, բայց այն թերի է, անկատար, տարեցտարի փոխանցման մակարդակը նահանջում է, փոխանցվում է խոսակցական լեզուն չափազանց սահմանափակ բառապաշարով, մակարդակ, որը թույլ չի տալիս արտահայտվել ցանկացած նյութի շուրջ (2):

Հաճախականությունը՝ ամիսը 1-2 անգամ մեծամասնության համար (70%-ը): Սա ցույց է տալիս, որ հաղորդակցվողների համար լեզուն ամենօրյա հաղորդակցության միջոց չէ:

Բացի այդ, և որն ամենակարևորն է, չեն փոխանցվում ազգային մշակույթի արժեքները, պատմական նշանակալից երևույթները, հայ մշակույթի երևելի գործիչները՝ հայ բանաստեղծները, գրողները մեծ մասամբ անծանոթ են նույնիսկ հայերենը կիրառողների խավի մեջ: Կա մշակութային չափազանց ցածր մակարդակ (1):

Ընդհանրապես, լեզուն նահանջում է և կամաց կամաց մարում, երբ համայնքի մեջ այլևս ծնունդով բնիկ հաղորդակցվողներ չկան: Բնիկ հաղորդակցվողներ ասելով հասկանում ենք այն լեզուն, որը սովորում են կյանքի սկզբից ընտանեկան և դպրոցական միջավայրում, անձը լիակատար տիրապետում է լեզուն և այդ լեզուն ծառայում է որպես հաղորդակցության միջոց կյանքի բոլոր հանգամանքներում ու դառնում է մտածելու գործիք: Ներկա պայմաններում, կարելի է ասել, որ հայ համայնքը ինքն իր միջից չի վերարտադրում լիակատար բնիկ հաղորդակցվողներ:

Մարման վտանգը սպառնում է լեզվին, երբ համայնքը ինքն իր միջից չի վերարտադրում լիակատար հաղորդակցվողներ, լեզվական գիտելիքները փոխանցվում են անկատար, մասնակիորեն և աստիճանաբար լեզուն համայնքի մեջ կորցնում է

իր դերը՝ որպես հաղորդակցության, ազգային-մշակութային արտահայտության միջոց:

Ի վերջո, այս բոլոր նկատառումներից ելնելով, ինչ ախտորոշում կարելի է կատարել Մարսելի հայ համայնքում հայոց լեզվի կիրառության վիճակի ու պայմանների մասին:

Թվերը ցույց են տալիս, որ մեկ սերնդից մյուսը լեզուն կորցնում է իր հիմնական ֆունկցիան, այն է՝ ծառայել որպես միջհամայնքային հաղորդակցության գործիք, ազգային մշակութային արժեքները արտեցնելու ու փոխանցելու գլխավոր ազդակ:

Հայոց լեզուն տիրապետող զանգվածը չունի այն կիրառելու լայն ամենօրյա համակարգ: Լեզվի կիրառության տարածքները չափազանց սահմանափակ են, կիրառության ոլորտները՝ նեղ, ընտանիք, ընկերային միջավայր, լեզուն չունի սոցիալական ֆունկցիա, որը և հանգում է չափազանց սահմանափակ ու մակերեսային բառապաշարի օգտագործմանը:

Կարելի է, արդյոք, այս բոլոր նկատառումներից ելնելով, ասել, որ լեզուն դատապարտված է մարման (մի քանի սերնդից):

Հայտնի լեզվաբան Կլոդ Հաժեժը, իր «Կասեցնել լեզուների մահը» (4) աշխատության մեջ թվարկում է այն նախանշանները, որոնք հանգեցնում են լեզուների մարմանն ու մահվանը:

Ղա տեղի է ունենում,

- երբ լեզուն ձևափոխվում է,
- երբ լեզուն փոխանորդվում է (փոխարինվում է),
- երբ այլևս չկան բնիկ հաղորդակցվողներ:

Լեզվի ձևափոխությունը չափազանց դանդաղ գործընթաց է, այն զգալի է դառնում հարյուրամյակներ հետո: Կարծում են, այս կետը առայժմ ուղղակիորեն չի վերաբերում հայերենին:

Լեզուն փոխանորդվում է, երբ մեկ այլ լեզու՝ գերիշխող լեզու (տվյալ դեպքում՝ ֆրանսերենը), աստիճանաբար փոխարինում է համայնքային լեզվին: Առաջին փուլում երկու լեզուները գոյակից են: Հաղորդակցվողները անխտիր դառնում են երկլեզվանի, հետո, ժամանակի ընթացքում, աստիճանաբար սերնդից սերունդ գերիշխող լեզուն դառնում է միջհամայնքային հաղորդակցության միջոց և փոխարինում է բնիկ համայնքային լեզվին: Այս գործընթացը վերաբերում է հայոց լեզվին: Այն զգալիորեն նեղացնում է հայերենի տեղը, կարգավիճակը հասարակության մեջ ու կրճատում հայերենի կիրառության տարածքները:

Վերջապես, լեզուն մարում է, երբ այլևս չկան բնիկ հաղորդակցվողներ կամ ավելի ճիշտ, համայնքային լեզուն ինքն իր միջից չի վերարտադրում բնիկ հաղորդակցվողներ: Լեզվական կարողությունները փոխանցվում են անկատար, թերի ձևով: Ինչպես տեսանք, այս գործընթացը նույնպես զգալի կերպով վերաբերում է հայ համայնքին:

Ահա այսպիսին է Ֆրանսիայի և Եվրոպայի ամենահայախոժ քաղաքում՝ Մարսելում և նրա շրջանում հայոց լեզվի կիրառության ընդհանուր պատկերը: Թերևս այս պատկերը շատերին հոռետես թվա: Մեր կարծիքով, կենդանի լեզվի հարատևությունն ու բնականոն զարգացումն ապահովող անհրաժեշտ նախադրյալները ներկա պայմաններում բացակա են այս հայ համայնքի մեջ:

Հայոց լեզուն լիակատար տիրապետող փոքրաթիվ էլիտան չպետք է ծածկի, քողարկի Սփյուռքի մակերեսային հայերեն իմացող լայն զանգվածներին:

Գրականություն

1. Տե՛ս **Ռ. Տեր Մերկերյան**, Արդի գրական հայերենի երկու ճյուղերի կիրառության ոլորտները, «Բազմավեպ», թիվ 1-4, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1998, էջ 170-185 (ֆրանսերեն):
2. Տե՛ս **Ռ. Տեր Մերկերյան**, Հայերենի երկլեզվությունը Ֆրանսիայում. մի քանի պատճենված արտահայտությունների օրինակը (ֆրանսերեն) in: Linguistique et Slavistique, Mélanges offerts à P.Garde, Ed. Universtie de Provence, Aix-en-Provence, 1992, Vol. 2.
3. Տե՛ս **Ռ. Տեր Մերկերյան**, Բառակերտման միջավայր և միջոցներ արդի արևմտահայերենում, «Պատմաբանասիրական հանդես» թիվ 2, Ե., 1997, էջ 93-103:
4. Տե՛ս **Կ. Հաժեժ**, Կասեցնել լեզուների մահը (ֆրանսերեն) C. Hagège, Halte à la mort des langues, Ed. Odile Jacob, Paris, 2002.

**Մարտել բաղաբուն հայոց լեզվի կիրառության համաժամանակյա վերլուծություն
1920-1935 թվականներին ծնված անձեր (75 տարեկանից բարձր)
Միսնա 1**

54 հարցաթերթիկներ	ԾՆՎԵԼ ԵՆ		ԳՐՈՒՄ ԵՆ		ԿԱՐԴՈՒՄ ԵՆ		Հաճախակա- նությունը	
	Ֆրանսիա	Հայաստան	Այո	Ոչ	Այո	Ոչ	Հաճախ	հազվադեպ
65%-Ո՞ դպրոց հաճա- խել են	97%-Ո՞ լավ են խոսում հայերեն	24%	76%	24%	82%	18%	82%	18%
	3%-Ո՞ չեն խոսում հայերեն	100%	0%	100%	100%	0%	0%	100%
35%-Ո՞ դպրոց չեն հաճա- խել	74%-Ո՞ լավ են խոսում հայերեն	43%	7%	93%	64%	56%	79%	21%
	26% չեն խոսում հայերեն	40%	40%	100%	0%	100%	20%	80%

Ընդի. %-ները : խոսում են 89% գրում են 50% կարդում են 69% Օգտագ. են 72%

**Մարտել բաղաբուն հայոց լեզվի կիրառության համաժամանակյա վերլուծություն
1930-1945 թվականներին ծնված անձեր (58-ից 75 տարեկան)
Միսնա 2**

175 հարցաթերթիկներ	ԾՆՎԵԼ ԵՆ		ԳՐՈՒՄ ԵՆ		ԿԱՐԴՈՒՄ ԵՆ		Հաճախակա- նությունը	
	Ֆրանսիա	Հայաստան	Այո	Ոչ	Այո	Ոչ	Հաճախ	հազվադեպ
57%-Ո՞ դպրոց հաճա- խել են	85%-Ո՞ լավ են խոսում հայերեն	79%	73%	27%	79%	21%	81%	19%
	15%-Ո՞ չեն խոսում հայերեն	100%	27%	73%	33%	67%	40%	60%
43%-Ո՞ դպրոց չեն հաճա- խել	57%-Ո՞ լավ են խոսում հայերեն	88%	42%	58%	37%	63%	72%	28%
	43%-Ո՞ չեն խոսում հայերեն	81%	0%	100%	0%	100%	1%	99%

Ընդի. %-ները : խոսում են 73% գրում են 46% կարդում են 47% Օգտագ. են 7%

Մարտել քաղաքում հայոց լեզվի կիրառության համաժամանակյա վերլուծություն
1945-1965 թվականներին ծնված անձեր (38-ից 58 տարեկան)
Միջնա 3

174 հարցաբերթիկներ	ԾՆՎԵԼ ԵՆ		ԳՐՈՒՄ ԵՆ		ԿՎՐԴՈՒՄ ԵՆ		Հաճախակա- նությունը			
	Ֆրանսիա	Հայաստան	այլուր	Այո	Ոչ	Այո	Ոչ	Հաճախ	հազվադեպ	
56%-Ո դպրոց հաճա- խել են	75%-Ո լավ են խոսում հայերեն	19%	25%	66%	85%	15%	89%	11%	93%	7%
	25%-Ո չեն խոսում հայերեն	96%	0%	4%	33%	67%	38%	62%	58%	42%
44%-Ո դպրոց չեն հաճա- խել	32%-Ո լավ են խոսում հայերեն	64%	12%	24%	32%	68%	44%	56%	88%	12%
	68%-Ո չեն խոսում հայերեն	94%	0%	6%	6%	94%	13%	87%	15%	85%

Ընդհ. %-ները : խոսում են 56% Գրում են 40% Կարդում են 44% Օգտագ. են 52%

Մարտել քաղաքում հայոց լեզվի կիրառության համաժամանակյա վերլուծություն
1965-1985 թվականներին ծնված անձեր (18-ից 38 տարեկան)
Միջնա 4

205 հարցաբերթիկներ	Ծ Ն Վ Ե Լ Ե Ն		ԳՐՈՒՄ ԵՆ		ԿՎՐԴՈՒՄ ԵՆ		Հաճախակա- նությունը			
	Ֆրանսիա	Հայաստան	այլուր	Այո	Ոչ	Այո	Ոչ	Հաճախ	հազվադեպ	
73%-Ո դպրոց հաճա- խել են	62%-Ո լավ են խոսում հայերեն	49%	14%	37%	87%	13%	88%	12%	95%	5%
	38%-Ո չեն խոսում հայերեն	95%	2%	3%	53%	47%	51%	49%	51%	49%
27%-Ո դպրոց չեն հաճա- խել	38%-Ո լավ են խոսում հայերեն	57%	10%	33%	57%	43%	57%	43%	95%	5%
	62%-Ո չեն խոսում հայերեն	89%	5.5%	5.5%	11%	89%	11%	89%	3%	97%

Ընդհ. %-ները : խոսում են 55% Գրում են 40% Կարդում են 44% Օգտագ. են 52%

**Հայոց լեզվի կիրառությունը Մարտել քաղաքում
ՀԱՅՏԵՐԵՆԻ ԿԻՐԱՊՈՒԻՅՅԱՆ ՀԱՄԱՐՈՎԿԱՆ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՐՈՒՆՂՆԵՐԻ**

Սխեմա 5

	Սերունդը 1920 / 1930	Սերունդը 1930 / 1945	Սերունդը 1945 / 1965	Սերունդը 1965 / 1985	Բոլոր սերունդների միջին տոկոսային հարաբերությունը
Լավ են խոսում հայերեն	89%	73%	56%	55%	68%
Հայերեն գրել գիտեն	50%	46%	40%	40%	44%
Հայերեն կարդալ գիտեն	69%	47%	44%	44%	51%
Հայերենը կիրառում են պարբերաբար	72%	57%	52%	52%	58%
Սերնդի միջին տոկոսային հարաբերությունը	70%	56%	48%	48%	

**Հայոց լեզվի կիրառությունը Մարտել քաղաքում
ՀԱՅՏԵՐԵՆԻ ԿԻՐԱՊՈՒԻՅՅԱՆ ՀԱՄԱՐՈՎԿԱՆ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՐՈՒՆՂՆԵՐԻ**

Սխեմա 6

	սերունդ 1920 / 1930	սերունդ 1930 / 1945	սերունդ 1945 / 1965	սերունդ 1965 / 1985
Ղպոց հաճախել են	65%	57%	56%	73%
Ղպոց չեն հաճախել	35%	43%	44%	27%
Ծնվել են Ֆրանսիայում	31.5 %	83.5 %	69 %	69 %
Ծնվել են Հայաստանում	5.5 %	2 %	10 %	9 %
Ծնվել են այլուր	63 %	14.5 %	21 %	22 %